

3
ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԹԱՎԵԼ ԴՈՐՈԽՈՎ

390

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՏԻԿԸ ԼԵՆԻՆԻ ՄՈՏ ԳՆԱՑ

Թարգմ. Հ. Պ. ՊԵՏՏՐՈՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1927

30 MAY 2011

89-715

7-81


ԿՈՄՅԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՂՆԵՐԱԿԱՆ ՍԵՐԻԱ

ԹԱՎԵԼ ԴՈՐՈԽՈՎ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԻԿԸ
ԼԵՆԻՆԻ ՄՈՏ ԳՆԱՑ

ՀՕԾ -



Պետական Հրատարակություն - Յերևան, 1927

1

Այսոր սեղանը կատյուշը պիտի բաց անի,
նա յել ալարում և վատը վոտի առաջ չի դնում,
բարկացած շրխկացնում ե թիթեղե գավաթները:

Յեղյամի սպիտակ խավով ծածկված լուսա-
մուտներից աղոտ թափանցում ե լույսը: Ապակու
վրա տարորինակ նախշեր են դուրս յեկել. ձեռ-
քով այդպիսի տոնածառեր, ծաղիկներ ու խու-
ճուճներ դուրս բերել չես կարող: Մի տես՝ վհնց
են վոլորվում:

Լուսամուտը կատյուշին գրավեց: Ճկույթով
բզեց ապակին, – յեղյամե խալին փոս ընկավ:
Մի ուրիշ տեղ բզեց, – ելի փոս ընկավ: Մատը
ճարտար նախշերի վրայով պտտացըրեց, – ձայրը
սառեց:

Կատյուշը մտքի մեջ ընկավ: Իրենց գյու-
ղում հիմա սահնակներով են ման գալիս: Սա-
րեր են շինել, վրաները ջուր շաղ տվել: Հենց
վոր նստում ես սահնակը, սարից ուղղակի գե-
տըն ես հասնում ու սացի վրայով – ոը՛լլ – մյուս
ամիր: Ականջներդ դժմում են, շունչդ կտրվում



7861-88

№ 515

Գրառելվար № 99 (ր)

Տիրաժ 4000

Գետհատի տուաջին տպարան Վաղարշապատում

ե, սիրտդ տրոփում, սրունքներդ ալրվում, մըզ
մըզում են: Դըժուվըժ, հոնոց:

— Կատյուշ, դու ելի՞ սեղանը բաց չես
անում: Տես՝ Նադեժդա Իվանովնային կասեմ:

Կատյուշը յետ ե նայում, նրա առջեւ իր
ընկերը — Պետիկն ե: Պատիկի յետել, դիմացի
պատի վրա, մթնշաղի մեջ՝ քեռի Լենինն ե՝
նեղիկ, սև շրջանակի մեջ: Կատյուշը սառած
մատը մտածկոտ տանում ե բերանը ու Լենինին
նայում: Քեռի Լենինը հոնքերը կիտում ե: Պատ-
ճառն այն ե, վոր Կատյուշն ալարում ե, այսոր
հերթը նըանն ե, նա յել նազուտուզ ե անում,
ալարում ե:

— Դու գեռ հաց ել չես դրել, ուհ, գոթե-
նաս դու:

Պետիկը նկատում ե, վոր Կատյուշը իր կող-
քից նայում, շուռ ե գալիս, աչքերը փոքը ինչ
հառում ե Լենինի վրա և ասում:

— Տեսնում ես, քեռի Լենինը բարկանում ե:

Կատյուշը հոնքերի տակից նայում ե Պետի-
կին, հետո՝ ելի Լենինին ու գլուխը պտտացնում:

— ԶԵ, նա լավ մարդ ե:

— ԶԵ, բարկացկոտ ե, տես, ունքերը վոնց
ե կիտում:

Ճիշտ վոր, անհասկանալի յե, վոչ են ե՝ բար-
կանում ե, վոչ են ե՝ բարի յե:

Ինչքան ել վոր Կատյուշը համոզված ե, թե
քեռի Լենինը բարի յե, ելի հենց՝ նրան թվում
ե, թե ուր վոր ե շրթունքները կբանա, մատը
թափ կտա վրան ու կասի:

— ՏԵս, Կատյուշ, դու ելի ծուլանում ես.
Նադեժդա Իվանովնային կասեմ, հա:

Հենց այդ ըսպեյին ել Նադեժդա Իվանով-
նան սկսեց թուք ու մուր անել:

Կատյուշը ախ բաշելով խոհանոց ե գնում
հացի:

2

Պետիկն ու Կատյուշը մի գյուղից են: Պե-
տիկի հայրը քաղաք եր գնում. վորդուն եր տա-
նում. հարևանն ել ասաց նրան.

— Իվան, Կատյուշիս ել հետդ տար, գուցե
ենտեղ մի կերպ ապրի: Շուտ թե ուշ, մենք վու-
նըներս կփռենք, աչքըներս կչռենք:

Պետիկի հայրը Կատյուշին ել վերցրեց, ման-
կատուն ավեց ու յետ դարձավ: Պատիկը հիմա
ինչպես ե հիշում եղ բանը: Հայրը լուռ կանգնած
ե իր առաջ. սև ու կոշտացած ձեռքով շոյում ե
Պետիկի գլխի թափթփված գանգուրները: Հոր
ձայնը դողում ե.

— ԴԵ, ապրիր, Պետիկ ջան, մի կերպ գլուխդ
կպահես .. մենք ել... ԴԵ բան ե՝ ով գիտի՝ թե
վոր... Մնաս բարով, բալիկս:

Ու գնաց:

Այդ որվանից ահա յերկու տարի յե՛ ինչ
Պետիկը հորը չի տեսել: Խոսք չկա, վոր մանկա-
տանը կուշտ են պահում, լավ են կերակրում,
բայց ելի մեկ մեկ հենց տուն գնալ ե ուզում:

Խիտ ճամակալած՝ հանդի պուճուր ջրտարնե-
րի, հինու ժամանակից սևացած հողմաղացների,
գետակի այն կողմի բարդու փոքրիկ անտառի
կարոտը ալրում խորովում եր նրան: Խոր ձորա-
կին ել եր կարուտում; վորաեղ վազ եյին տալիս
ծիծեռնակի բների համար:

Յերբեմն ել Պետիկը հենց այսպես եր մտա-
ծում—վեր կենա ու փախչի մանկատնից: Բայց
գյուղը հեռու յե՛, դժվար թե ճամպեն գտնի: Այն
քաղաքից, ուր հայրն եր տարել, մի ուրիշ քա-
ղաք ելին փոխադրել, ուր հացը յեկել եր: Այդ
ել վոչինչ, մեկ ե, կդնար, բայց ի՞նչ իմանաս՝
տանը վժնց են—սաղ են, թե մեռած: Ախըր վոր
սաղ լինեյին՝ կդային, ե: Իրեն հո դեն չեն զցի:
Կարելի յե՛ վոր սաղ լինեն, բայց հավանական ե,
վոր հացը չի յեկել:

Յերկար ժամանակ կանգնած ե Պետիկը Լե-
նինի պատկերի առաջ: Ա՛յ թե ով պիտի պատմի,
արի ու բոլորը հասկացիր: Նադեժդա իվանով-
նան ասում եր, վոր ամեն ինչ գիտի:

— Տես, ճակատն ենքան լեն ե, կասես գա-

թա լինի, — մտածում ե Պետիկը, — կասես ողոր-
մած քեռի նազարի ճակատը լինի:

Լենինը նալում ե՝ աչքերը քիչ կուչ ածած,
ու Պետիկին թվում ե, թե նա ժպիտով հավա-
նություն ե տալիս:

3

Յերեկոները բոլորը սեղանատուն են հա-
վաքվում: Մուգ-կանաչ լուսամփոփով ելեկտրա-
կան լամպը առաստաղի տակ պայծառ վառվում
ե: Յերկար սեղանի շուրջը աղջիկները ձեռա-
գործով մլոր են անում—մեկը գուլպա յե գոր-
ծում, մի ուրիշ՝ յերեխաների համար թաթման-
ներ, յերրորդն ել գույնզգույն շորի կտորտան-
քից տիկինների համար հագուստեղեն ե հնարում:
Տղաները տախտակի ու փայտի կտորտանք են
ուանդայում, թակով թխկթխկացնում, թղթից
ու ստվարաթղթից ինչ վոր հնարովի տնակներ
շինում: Նադեժդա իվանովսան հաճախ բարձր
ձախով գիրք ե կարդում: Այդ միջոցին գործը
թողնում ու շունչները պահած, սպիտակ-գվար-
դիականների գեմ կովող իրենց հայրերի համար
ուումբեր կրող ու հաց տանող փոքրիկ յերեխա-
ների մասին պատմություններ են լսում: Կտրիճ
յերեխաները համարձակ մոտենում ելին թշնա-
մուն, հետախուզում նրա զասավորությունը և
անփորձ յես դառնում:

6

7

Պետիկը, յնորքների մեջ ընկած, զետին և
նայում ու վաղուց արդեն չի լսում Նագեժզա
իվանովնայի կաբդալը:

Այս, յերնեկ թե Պետիկն ինքն ել ալդպես
արած լինել:

Պետիկը պատկերացնում ե իրենց զյուղի
խոր ձորակը. ձորակի մյուս կողմը թագ են կե-
նում Ռուսաստանի լայն տափաստաններից յե-
կած սպիտակ-գվարդիականները: Պետք ե իմա-
նալ, թե նրանք վնարքան են և ինչ են ուզում
անել: Սպիտակներին մոտենալն ում պետք ե
հանձնարարել: Դե պարզ ե, վոր Պետիկին. ել ով
կարող ե նրանից լավ բարձրանալ ամենաբարձր
ծառը, ով ամենից շուտ ծիծեռնակի բուն կդառնի
ու ձորի վրա կախված ժայռով այնտեղ կմագլցի...

Պետիկը դեպի ձորակն ե վագում, փորսող
ե տալիս, խոնավ, խոր հատակի վրա, զգուշու-
թյամբ սողում ե մյուս ափը, դաշտի մկան պես
անաղմուկ բոլորովին մոտենում ե թշնամիներին,
համբում ե, թե քանիսն են, ականջ ե գնում
նրանց խոսակցություններին: Նույնպիսի զգու-
շությամբ ել ձորակով յետ ե դառնում, սրբնթաց
քամու պես սլանում ե հանդի միջով, պատմում
ե բոլոր գյուղացիներին, նրանց հետ հարձակվում
սպիտակների վրա ու կոտորում նրանց...

— Պետիկ, քնել ես...

Պետիկը յնցվում ե և աչքերը բաց անում:
— Զե՞, չեմ քնել, Նագեժզա իվանովն ա:
Բոլորն ուրախ ծիծաղում են:

4

Առավոտ ե:

Բակում յերեխ սառնամանիք ե, լուսամուտ-
ները զեռ ծածկված են յեղյամի թանձը շերտով:
Սեղանատունը կիսախավարի մեջ ե: Հազիվ զեն-
դում են թիթեղյա գավաթները, կարմրակալած
թարմ բոքոնների անուշ հուան ե փշում: Սեղա-
նի մեջտեղը դրած պղնձե մեծ թեյամանից գո-
լորշին ե բարձրանում. թելամանի շուրջը, ինչ-
պես մշուշի մեջ, յերեխաների փոքրիկ դեմքերն
են յերեւում: Հենց վոր Նագեժզա իվանովնան
գուրս ե գալիս, բոլորն սկսում են թեին ազմու-
կով խմել:

Լուսամուտը ծեծեցին:

— Փոստն եկավ, — թրվուացին յերեխաները:
Ամեն որ այդ ժամին լրագիր են բերում:
Պետիկն ու Միշան միջանցքն են նետվում:

— Պետիկ, Միշա, ուր այդպես ակլոր, —
յետեներից վազ տալով ճշում ե զաստիարակ-
չուհին:

Պետիկը Միշայից առաջ ե հասնում, լրա-
գիրը խլում ու թուչում դեպի Նագեժզա իվա-

նովսան: Նադեժդա Իվանովսան լրագիրը կողքն
ե դնում, փոքրերից մեկի համար թեյ լցնում:

Յերեխերի համբերությունը կտրվում ե:
— Նադեժդա Իվանովսա, կարդացեք:

Դաստիարակչունին լրագիրը բաց ե անում:
Հանկարծ գունատվում ե, ավելի ցած կռանում,
աչքերը սեռում ձեռքի մեջ դողացող լրագրին:
Հետո ընկնում ե աթոռի մեջքին ու կուրծքը
բռնում:

— Յերեխեք... յերեխեք... ել քեռի Լենին
չունենք...

Նադեժդա Իվանովսայի ձայնը թույլ, դող-
դոջուն ե: Լրագրի թերթը ձեռքում բարձրուցածը
ե անում: Հանկարծ թախծոտ աչքերը ման ածեց
պապանձված յերեխաների վրա:

— Լենինն ե մեռել:

Կառյուշը, քիթը խոթելով, նետվեց դեպի
Նադեժդա Իվանովսան, յերեսը ծածկեց նրա
ծնկների մեջ ու լաց յեղավ: Նադեժդա Իվանով-
սան կռացավ աղջկա վրա, քննքուշ շոյեց վոսկե-
հեր գանգուրները: Մյուսներն ել լաց յեղան:
Պետիկը վաղեց ամենափոքրի, իր սիրելի Ֆե-
դյուրկայի մոտ, վերնաշապկի փեշով սրբեց նրա
քիթը:

— Մի լա, մի լա, Ֆեդիկ ջան, մի լա:

Մի կտոր հաց խոթեց նրա ձեռքը, շոյեց
խուզած բիզ-բիզ մազերը:

— Մի լա, մի լա, Ֆեդիկ ջան, մի լա:
Նադեժդա Իվանովսան մտուցավ Լենինի
պատկերին: Յերեխեքը հավաքվեցին շուրջը: Պե-
տիկը պլած աչքերով նայում եր Լենինին ու
մտածում:

— Դրուստ վոր Կատյուշի ասածը ճիշտ ե,
լավ մարդ ե:

Նադեժդա Իվանովսան գլուխն որորեց ու,
կարծես թե ինքն իր մեջ, մտազբաղ ասաց.

— Ախ, Իլյիչ, Իլյիչ:
Ու հանկարծ Պետիկին թվաց, թե Լենինի
կլոր շրթունքներն անուշ ժպիտով շարժվեցին,
կուշ ածած ձախ աչքը խորամանկ կերպով թար-
թեց.

— Դարդ մի անի, Պետիկ, չենք կորչի:
5

Թեյից հետո սոճու փոքրիկ ճլուղերից պսակ
հյուսեցին: Կարմիր ու սև քաթանից Լենինի պատ-
կերի համար շըջանակ պատրաստեցին: Շըջանա-
կի վերեկց ու նելքեց յերկու մեծ սև ժապա-
վեն կպցրին: Հանգեսներից ու գըքերից, Նադեժ-
դա Իվանովսայից ծածուկ, պոկեցին բոլոր այն
նկարները, վորոնց մեջ այս կամ այն կերպ Լե-

նինն եր նկարված։ Այսն մի նկարի համար ու կտորից փոքրիկ շրջանակներ պատրաստեցին, գնդասեղներով պատին ամրացրին ու պատի վրա բոլոր նկարների տակից մի յերկար կարմիր ժապավեն անցկացրին, այսպիսի մակագրությամբ։

— Սիրում ենք քեզ, քեռի Լենին, ցավում ենք քեզ, մեր Խլիչ։

Պետիկն ափսոսելով ափսոսում եր Լենինին, կարծես իր Նազար պապը յերկորդ անգամ եր մեռել, վորի համար Պետիկն իր կյանքը չեր խնայում։ Նկարները պատին կպցնելիս աչքը մեկ մեկ Լենինի պատկերին եր գցում։ Հիմա սիրալ կճմլվի, աչքերը վրա-վրա բաց ու խուփ ե անում, քիթը վեր-վեր քաշում։

Յերեկոյան Նազեժդա Իվանովսան յերեխաներին պատմում եր Լենինի մասին։ Շունչները պահած՝ լսում եյին։ Կատյուշը խճճված շիկահեր գլուխը Նազեժդա Իվանովսայի ծնկան եր դրել ու բերանը կիսաբաց նրա յերեսին եր նայում։ Կարծեք թե կենդանի Լենինը յերեաց յերեխաների աչքին։ Թշնամիներից թագ կացավ, դաշտում վրան խիեց ու այնտեղ ապրեց, մինչև վոր Լենինի բարեկամները-բանվորներն ու գյուղացիները գործարանատերերին ու կալվածատերերին վոնդեցին ու յեկան նրա յետեից։

Մեծ սենյակում լուսթյուն ե տիրում։ Պա-

տուհանի տակով յերբեմն-յերբեմն վոտավոր ե անցնում։ Սահնակները ձյունն են ճոճացնում։ Յերեխաներից մեկը ախ քաշեց։

— Բա չե՞ր մըսում։

— Զե, ցուրտ չեր, ամառն եր, — ասաց Նազեժդա Իվանովսան։

Պետիկը թրպլրտաց։

— Են ել ինչ ամառ։ Կասես թե մեզնում ե, վոր գիշերը ճանապարհ գնալիս պարզկան են-պես ե հուպ տալիս, վոր ատամներդ չխկչխկում են։ Ամառվա գիշերներն ել են ցուրտ լինում։

Լրագրի արտակարդ համար բերին։

Նազեժդա Իվանովսան ելի բարձրածայն կարգաց։ Գրված եր միայն Լենինի մասին, թե ինչպես են նրա մարմինը դադաղի մեջ Մոսկվա՝ Միությունների Տունը տեղափոխել, ինչպես են թաղման պատրաստություն տեսել։ Լրագրում նկարներ կային։

Ժողովրդի ահազին բազմությունն անընդհատ դեպի Միությունների Տունն եր գնում։ Լենինը նկարված եր ծաղկապատ դագաղում։ Մի ուրիշ տեղ մեծ դահլիճում, ծառերի պես հսկա ծաղիկների արանքում դագաղն եր նկարված։ Դագաղի անկյուններում մեխված կանգնել եյին չորս կարմիր բանակային։

Յերեխաները վրա պրծան նկարները տես-

Բակում ձնագունդ ելին խաղում, Պետիկը կատյուշին մի կողմ քաշեց ու խորհրդավոր կերպով ասաց.

— Լսիր, թե ի՞նչ եմ ասում... Ամա տես,

վոչվոքի չասես:

Կատյուշը պայծառ աչիկները հառեց Պետիկի վրա ու գլխով արեց.

— ԶԵ, չեմ ասի:

— Դընւստ՝ չես ասի:

— Դընւստ:

Պետիկը մոտեցավ Կատյուշի ականջին ու շտապ շշնջաց.

— Ուզում եմ՝ Մոսկվա գնամ, Լենինին տեսնեմ:

— Ի՞նչ, մենակ, — վախեցած հարցրեց Կատյուշը:

— Մենակ:

— Նադեժդա Իվանովսան չի թողնի:

— Չի թողնի, լես ել կփախչեմ, — խոժոռած ու վճռականորեն վնթինթաց Պետիկը: — Բայց տես, սուս կանես, հա:

Կատյուշը թափ տվեց թաշկինակի տակից դուրս թռած շեկուի գանգուրները ու լրջությամբ առաց.

— Շատ լավ:

Նելու, Պետիկն ուրիշների գլխների վրայով վիզը յերկարացնեցնելով, նայում եր լենինին՝ յերկար ժամանակ: Հանկարծ, աչքերը Նաղեժդա Իվանվալից թագյնելով, կամացուկ հարցրեց.

— Բոլորին ել թողնում են տեսնելու,

— Բոլորին ել, անուշ ջան:

Պետիկի ձայնը բոլորովին կտրվեց:

— Պատիկներին ել:

— Բա, պստիկներին ել, բա:

Կատյուշն ամենից ավելի լեր մոտիկ կանգնել նկարներին:

— Տես, տես, Պետիկ, այ, փոքրերին են տանում:

Ու յեղունկը կրծած բարալիկ ճկույթը դրեց վրան:

Պետիկը գլուխների վրայով վիզը յերկարացրեց:

— Ո՞ւր ե, ուր:

Միությունների Տան առաջ լերկար ժապավենի պես մարդկանց շարանն եր ձգված:

Կարծեք թե հենց մեր մանկատունը լինի, — ասաց Նաղեժդա Իվանովսան:

Պետիկն ուշի-ուշով զննեց նկարը: Հետո հառաչելով հեռացավ, մտքի մեջ խորասուզված կանգնեց լենինի պատկերի առաջ: Բարակ կնճիռը ակոսեց նրա փոքրիկ ճակատը,

Պետիկը հեռացավ: Իր ընկերունուն գաղտնիքը հայտնելուց հետո թեթևություն զջաց. շատ ծանր եր ամեն ինչ իր մեջ պահել:

Կատյուշը տեղում յերկար ժամանակ կանգնած մտածում եր: Հետո, յերբ Պետիկը մոտով վազում եր, հանկարծ կանչեց նրան:

— Բաս ինչո՞վ ես գնալու:

— Յերկաթուղով:

— Բաս ինչ ես ուտելու:

— Համ ճաշի հացը կպահեմ, համ ել ընթրի.

քինը:

Ուսերը վեր քաշեց: Այլևս վոչ մի առարկություն չուներ կատյուշը:

Ճաշի ժամանակ Պետիկը նստել եր լուս ու կենարոնացած:

Ուտում եր առանց շտապելու և այնպես եր ձեռնում, թե շատ և զբաղված ուտելով: Իր հացի կտորից փոքրիկ պատասիկներ եր պոկում, բերանը տանում ու դանդաղ ծամում. Հարմար ըսպե ընտրեց. յերբ վաշվոք իրեն չեր նայում, ու հացի կտորը զրպանը խոթեց: Բայց և այնպես, ուտել եր ուզում: Աշխատելով ուշադրություն չգրավել իր վրա, անվստահորեն ձեռքը մեկնեց դեպի հացի ափսեն, մի կտոր ևս վերցըքեց: Այդ կտորի կեսն, եւ ուտելուց հետո մասցածը զրպանը դրեց:

Հացի կտորները զրպանում՝ անհարմար եր ման գալ: Շարունակ վախենում եր՝ չինի թե մեկը հանկարծ զրպանին զիպչի և իմանա, վոր Պետիկի զրպանում հաց կա: Գնաց ննջարան, իբր թե գլխարկը փնտուելու, անկողինը շուռումուռ տվեց և հացի յերկու կտորը պահեց բարձի տակ: Քնելուց առաջ մոտ յեկավ կատյուշը և ուրիշներից թագուն մի մեծ կտոր հաց Պետիկի ձեռքը խոթեց:

— Առ, ես շեղ համար ելի պահել:

Հացի կտորը ձեռքին, Պետիկն արագ վերմակի մեջ կոլուվեց:

7

Յերեխեքը յերկար մլոլ եյին անում իրենց անկողինների մեջ, քունները չեր գալիս: Լենինի մասին եյին խոսում ու նախանձում այն յերեխաններին, վորոնց նկարը տեսել եյին լրագրում:

— Բախտավոր են: Նրանք կտեսնեն լենինին: Այ, մեր մանկատունն ել վոր Մոսկովում լիներ, Նաղեժդա հվանովնան մեզ ել կտաներ:

— Բաս չեր տանի՞: իհարկե կտաներ:

Մեկը, մեծ մածուկ պես, խորը ախ քաշեց: Քիչ ժամանակ բոլորը լուցին:

Սիմբիրակը մեջ մեջ մեջ թրիշան ասաց, վոր լենինն ու ինքը միենուցն նահանգից են:

— Ըսկիս լենինը, իհարկե, չեր ուզի մեռ-
նել, — մտածկոտ ասաց Գրիշան:

— Դե իհարկե, ով կուզի՝ վոր մեռնի:

Սկսեցին պատմել մեկ-մեկու, թե ով ե տե-
սել՝ մարդ ինչպես ե մեռնում:

— Պետք ե վոր սարսափելի բան լինի մեռ-
նելը:

— Զե, իսկի յել սարսափելի չե, — վրա բերեց
սեաչյա ճարպիկ նլուրկան:

Բոլորը յերեաները գեղի նա դարձրին:

— Իմ տատը մեռնում եր, բայց իսկի յել
սարսափելի չեր: Մերոնք բոլորը դաշտում եյին,
տանը մենակ յես ու տատս եյինք: Մեկ ել տես-
նեմ՝ տատս ասաց. «Նյուրա, գնա բակից ցախ
բեր՝ վառարանը վառենք»: — «Ինչու, տատի», —
հարցնում եմ: — «Չուր տաքացնենք, մանս եկել
եա, Յես վախեցա ու լաց յեղա: — «Դու մի վա-
խենա», — ասում ե, — իսկի յել սարսափելի չե»:
Բակից ցախ բերի, տատս վառարանը վառեց, մի
կաթսա ջուր տաքացրեց: Հետո լողացավ, մա-
քուր շապիկ ու ծաղկավոր կապուլտ դերիս հա-
գավ. այդ դերիան տատս վաղուց եր պահում:
Տատս բարձն աղոթարան դարձրեց, պառկեց տեղի
մեջ, ձեռքերը խաչեց ու ասաց... Դե, թոռնիկս,
գնա, քեզ համար խաղա, թող յես մենակ մնամա: —
Փողոց գնացի, աղջկերանց հետ խաղով ընկա ու

տատիս մոռացա, Հետո մեկ ել միտս ընկալի,
վազեցի լուսամուտի մոտ, տեսնեմ՝ տատիկս
քնած ե: Ելի գնացի խաղալու: Մերոնք հանդից
յեկան, մտան տուն, ինչ տեսան — տատը մե-
ռած եր:

Դեռ յերկար ժամանակ խոսում եյին յերե-
խեքը, Պետիկը համբերությամբ սպասում եր:
Վաղուց եր քնած ձևացել և ոյինչե անգամ կա-
մացուկ խոժմացնում եր:

Մեկը ձայն տվեց.

— Պետիկ, ընկը ես:

Պետիկը չպատասխանեց:

— Քնել ե: Եկեք մենք ել քնենք:

Կամաց կամաց բոլորը քնեցին: Պետիկը քիչ
ել սպասեց, գլուխը բարձրացրեց, ականջ դրավ:
Ամբողջ մանկատունը լուռ ե: Հանդիստ ու հա-
մաշափ շնչում եյին յերեխեքը:

Անլուններից մեկում, մահճակալի տակ մի
մուկ զգուշ քոթերությանում եր: Դուրսը քամին
սուլում, ձյան մանը փոշին լուսամուտներին եր
շփում, զիշերը բաց մնացած փեղկերը շրպա-
ցնում:

— Յերեի իվանը մոռացել ե փակել, — մտա-
ծեց Պետիկը գոնապանի մասին:

Կամացուկ բարձրացավ, խարխափելով զտավ
գուլպեքն ու թաղիքե վոտնամանները, զիստա-

կից դուրս քաշեց գեռ յերեկոյան թաղցրած վերաբկուն ու զլխարկը և սրտատրոփ գնաց խոհ մնոց։ Զգուշությամբ բաց արավ դուռը, քայլեց առաջ և հանկարծ յետ-յետ զնաց։ Պատից ինչ-վոր մեկը սպիտակ-սպիտակ կախված եր. Պետիկը սառեց, մարմնով սարսուռ անցավ, հազիվ ճիշը պահեց։ Հետո, վախը խեղգելով, մռացավ ու տեսավ, վոր սրբիչ եւ, թեթեացած՝ խորը շունչ քաշեց։ Սրբիչը պատից իջեցրեց, վերաբկուի վրայով գեղավարի պինդ կապեց, հեշտ գնալու համար հացը ծոցը դրեց ու կամացուկ դուրս յեկավ բակը։

Փչում եր սառը քամին, ձյունի խայթող փոշին պտտացնում։ Գորշ ամպերի միջով սահում եր դալուկ լուսինը։

Դարպասը կողպած եր։ Առանց յերկար մտածելու, աջ ու ձախ մտիկ տվեց ու ցած թռավ։ Գլխարկն աչքերը քաշեց, բրդե թաթմանները ձեռներն անցկացրեց ու թևերը լայն-լայն զցելով, արագ բայլերով՝ դեպի կայարան զնաց։

8

Բուք ու բորան եր։ Սառը քամին խփում եր Պետիկի մեջքին, առաջ քշում նրան։ Հեռվում աղոտ լապտերներով փայլեց կայարանը։ Պետիկը բարձրացավ պլաստորմի վրա, մի ծալ-

րից մյուսոը զնաց, վոչ մի գնացը չկար։ Պետիկը տիրեց։

— Ի՞նչ անեմ։ Հարցնել մեկնումեկին։ Բավար հանկարծ ասի, թե՛ ինչիդ ե պետք։

Համենայն դեպս, պետք եր գնալ։ Տեսավ մոտից անցնող սպիտակ գոգնոցավոր մի մարդու, մոտեցավ նրան։

— Բիձա, Մոսկով գնացող պուեզդը վճրն ա։

Անցնողն աչքի տակով նայեց Պետիկին և առանց պատասխանելու ճանապարհը շարունակեց։ Հետո շուռ յեկավ ու սաաց։

— Այ, Ընկերներիդ հարցը ու, նրանք ինձնից լավ են իմանում։

Ու ցուց տվեց պլատֆորմի ծայրում սալամալեք * խաղացող յերկու տղայի։ Զհավատաց բիձային, կարծում եր, վոր նա կատակ ե անում։ Ե՛, եղ երեխեքն ինչ պիտի իմանան. նրանք ել իրեն պես յերեխա յեն։ Սակայն ինքը կամացուկ մոտեցավ տղաներին ու, բիչ հեռու կանգնելով, ուշադրությամբ զննեց նրանց։

Մեկը մոտեցավ Պետիկին, վոտից մինչեւ գլուխ սուսուփուս մտիկ արեց ու, հին ծանոթի պիս, մտերմորեն հարցրեց։

— Դու ուր պետք ե զնաս։

— Մոսկով։

* Մանկական խազ. մի վառքը բարձրացրած մյուսի վրա վեր-վեր են թռչում. — Ե. Թ.։

— Արի միասին գնանք, մենք ել ենք այնտեղ գնում: Իսկ դու իսկի յեղել ես ենտեղ, թե առաջին անգամն ես գնում:

— Առաջին անգամն եմ գնում:

— Ուրեմն դեռ խոխա յես, — մեղմ ժպտաց յերեխան:

— Դե մենք փորձված աղվեսներ ենք, յերրորդ անգամն ե, վոր Մոսկով ենք գնում:

— Ինչու:

— Իսկի, ինչու պիտի: Դե մի ամիս կապրենք ու ընդրանից դենք մեզ մի կողմ կցցենք: Հիմա մենք Տոմսկից ենք դալիս: Զահլեքներս գնաց ենտեղ:

— Եդ Տոմսկը հեռան յե:

— Հեռու յե, բա, ես ել յերրորդ շաբաթն ե՝ վոր գալիս ենք: Գալիս ենք, գալիս, հանկարծ մի տեղ կանգ առնում ու հանգստանում, — կամ գնացքը նստել չի աջողվում, կամ թե՝ մի ուշրիշ բան:

— Պա, ինչըսն հեռու յե, — թունդ զարմացավ Պետիկը:

— Եդ հլա ի՞նչ ե վոր, — ասաց յերեխան. — հերու յես Կովկասում եյի: Ամա սարսափելի տեղ ե հա: Սարերը բարձր-բարձր. յաշչիկից դուրս ես գալիս ստանցին, չորս բոլորդ ես տընտըղում, աման, աղե՛ ջան, կասես մկան թալա-

քի մեջ ըլես. սար, սար, հա սար, իսկի տուտ ու տակ կա վոր:

— Յաշչիկը վորն ե, — հարցրեց Պետիկը:

— Բա, մենք յաշչիկներով ենք գնում: Ե, բա ի՞նչ, դու իսկի յաշչիկով ճամպա չես գնացել:

— Պետիկը հանցավորի պես գլուխն որորեց:

— Չե, չեմ գնացել:

— Ե՛, բա դու իսկի մաշինով գնացել ես:

— Մի անգամ հորս հետ քաղաք եմ գնացել: Մանկատան հետ մի ուրիշ քաղաք փոխվեցին: Տղաները ծիծաղեցին:

— Ը՛ն, դու յել մի անգամ: Թա մուզ խոխա յես... Ա՛, դե կտեսնես, թե մենք վոնց ենք գնում: Անունդ ի՞նչ ե:

— Պետիկ:

— Իմ անունս Սիմիկ ե, իսկ նըանը, — ցույց տալով մյուս՝ ավելի փոքր տղալին, — Վասկա: Դու ինչու յես Մոսկով գնում:

Պետիկը քիչ մտածեց, — ասի՞, թե չասի: Չե, լավ ե՝ ասի: Բան վոր՝ մի տեղ պիտի գնան, ել ինչու ծածկի:

— Էսկեր կենինին մտիկ տալու:

Թե Սիմիկը, թե Վասկան ալդ բանի վրա բոլորովին ել չզարմացան:

— Մենք հլա Սիգրանումն եյինք, վոր լսեցինք՝ քեռի լենինը մեռել ե:

— Դու նրան չես տեսել, — հարցրեց Վասկան:

— ԶԵ:

— Իսկ յես հերու կարմիր հրապարակում ընկեր Տրոգկուն եմ տեսել:

Պետիկը նախանձով նայեց Վասկային ու մտածեց:

— Հլա տենում ես, բոյն ինձնից կարճ ե, ամա ելի...

Ու բարձր ձախով հարցրեց.

— Շնու ենք գնալու:

— Հիմի շուտով, մի սհաթից հետո պոյեղ-
դը պիտի գա:

Յերեխաներն ելի սալամ-ալեքն սկսեցին:

— Բ' մմ, ամա պարզկա յե, հա բերնի գո-
լը սառում ե:

— Հիմի մի կտոր հաց ըլեր ըստեղ, աղ-
քըներս դողում են, — ասաց Վասկան:

Պետիկը սուսուփուս ծոցից հանեց հացի
կտորը, մեջտեղից կիսեց ու ավեց տղաներին: Նա ամենեին չեր ափսոսում հացի կտորին, այժմ նա մենակ չի գնում, նոր լնկերների հետ տեղ կհասնի. յերեսում ե փորձված յերեխաներ են:

Հեռվում փողը փչեց: Մոտիկից ու բարձր՝ նրան պատասխանեց մի ուրիշ:

— Կասես մեր չոբան Նադըրն ըլի, ընենց
ա փշում, — մտածեց Պետիկը:

Ոլորանից յերկու հրեղեն աչքերով փայլեց շոգեմեքենան՝ բարձր փնչացնելով յերկաթե կրծքով, զլորվեց դեպի կայարան ու կանգ ա-
ռավ:

Յերեխաները թալրտացին:

— ԴԵ, տես, հիմի յետ ըլնկնես:

Ճանապարհորդները վագոններից խմբերով դուրս ելին թափվում, Ծառայողներն իրար ելին դուրս ելին թափվում, Ծառայողներն իրար ելին անցել: Սպիտակ գոզնոցավոր մարդիկ վազվում ելին, ճանապարհորդների իրերը դուրս բերելով: Պետիկը շշմում եր:

Տղաներն առաջ շարժվեցին: Անցան գնաց-
քի մյուս կողմն ու դեպի պոչը գնացին, ամեն
մի վագոնի տակը մտիկ անելով: Պետիկն սկըզ-
բում չեր հասկանում, թե բանն ինչումն ե, Հե-
տո նկատեց, թե ինչպես Սիմիկը բաց արակ
վագոնների տակ հարմարեցրած մեծ արկղների
դուռը ու ներս նայեց:

— Վակ սատանա դառնաք դուք, չորս կող-
մը ճխտված են. — դժգոհությամբ ասաց Սիմիկը:

Վագոնի հենց պոչում մի արկղ դատարկ
դուրս յեկավ: Հենց են ե՝ Սիմիկն ուզում եր՝
մեջը խթվի, լապտերը ձեռքին՝ մոտից անցնող
մարդը բարկացած բղավեց:

— Հլա պասաժիրներիս տեսէք. յիս ձեզ
ցույց կտամ:

Սիմիկն այնպես քսալով քաշվեց, կարծես
վոշինչ չեր պատահել:

— Ես կոնդուկտորը վորտեղից սատանի
պես ծլեց, — կամացուկ ասաց Վասկան Պետիկի
հետ կողք-կողքի քայլելով:

Հենց վոր կոնդուկտորը գնացքի մյուս կողմն
անցավ, Սիմիկը մի վայրկանում թռավ վագո-
նի մոտ, արկղի դռնակը բաց արավ ու մեջը
խթվեց, յետեկց իսկույն դուռը շնկացնելով:

— Բա մե՞ր բանը վոնց պիտի լինի, — ան-
հանգստությամբ հարցրեց Պետիկը իր հետ մնա-
ցած Վասկային:

— Շուտով մենք ել ներս կսողանք:

Մի անգամ վագոնի կողքով գնացին յեկան,
իբր թե՝ պարապությունից, հենց հնպես Վաս-
կան շուրջը նայեց:

— Դե, ջալդ արա:

Թռավ արկղի մոտ, դռնակը բաց արավ,

— Շուտ արա, մտի:

Պետիկը, սիրտն արագ գցելով, ներս մտավ:
Վասկան յետեկց հրեց նրան, ինքը յետեկց
մտավ, շրխկացրեց դուռը: Արկղի մեջ մութն եր:
Սուր-սուր ցախերի վրա պառկել չեր լինում:

— Բատեղ մտի, — Պետիկը մթության մի-
ջից լսեց Սիմիկի ձայնը:

Սիմիկն իսկույն ձեռքը պարզեց, Պետիկին
բռնեց ու քարշ տվեց անկյունը: Վասկան ամե-
նածայրին եր պառկած, զգուշությամբ և աշխա-
տելով չթխկթխկացնել, փայտերը դարսում եր
արկղի դուսն տակ, վորպեսզի նրանց յետել
թագնվեն:

— Դե հիմի թող տեսնեն:

Այուր սեղմվեցին արկղի անկյունում և
այնպես սսկվեցին, կարծես այնտեղ շունչ կեն-
դանի չկար: Հանկարծ մեկը մոտեցավ նրանց
վագոնին, նայեց արկղի մեջ, խարխափեց ու
կամացուկ հարցրեց:

— Մարդ կա եստեղ:

— Կա, — կամացուկ պատասխանեց Վասկան:

— Ո՞ւր եք գնում:

— Մոսկով:

Մի ոտար տղա դուռը շրխկացրեց ու գնաց:
Յերկրորդ զանգից հետո ելի մեկը մոտե-
ցավ: Լապտերը լուսավորեց արկղի ներսը:

— Եյ, հվ կա եղտեղ, դուրս եկեք, մեկ ե՝
ճամպին կիջեցնեմ:

Տղաները կուչ յեկան ցախերի յետեր ու
շունչները պահեցին: Դուռը շրխկաց:

Սիմիկի սիրաը տեղն ընկավ:

— Ե՞ն, խաթից պրծանք, Զանզը շուտ չի
տան:

Ու կարծեք թե մեկը ականջ եր դնում ման-
կան վշտին, — զանգը յերեք անգամ խուլ զողան-
ջեց:

Գնացքը ցնցվեց, մեկ յերկու, ու դանդաղ
հեռացավ կայարանից:

Պետիկը հիշեց մանկատունը, Նադեժդա
Իվանովնին, ընկերներին:

— Հիմի ման կգան:

Սկզբում սարսափելի յեր: Անիվսերն անընդ-
հատ դղբում եյին, արկղի հատակը դողում եր:
Թվում եր, թե ահա ուր վոր ե՝ փուլ կգա յեր-
կաթե անիվսերի տակ ու... սարսափելի յեր
մտածել, թե ինչ ե լինելու հետո: Ինչ-վոր տե-
ղից սառը հոսանքով ներս թափանցեց քամին,
բարակ վերարկուի տակ մտավ ու մարմինը սա-
ռեցրեց: Պետիկն ամուր կպավ Սիմիկին, վոտ-
քերը տակը ծալեց ու վագոնի համաչափ որորով
շուտով քուն մտավ:

9

Անսպասելի ցնցումից Պետիկն արթնացավ:
Մութն եր: Կողքին մեկը կամացուկ խոսում եր:
Սկզբում վախեցավ, հետո հիշեց, թե ինքը վճր-
տեղ է:

— Դուք եստեղ եք:

— Եստեղ ենք: Քունդ առար:

— Առա:

— Հիմի կիջնենք: Ուզում ես իջնել:

— Ուզում եմ:

Վասկան արկը բաց արավ, գլուխը դուրս
հանեց, շուրջը դիտեց ու գուրս յեկավ:

Նրա յետեկից գուրս յեկան Պետիկն ու Սի-
միկը:

— Այ մի բան ըլեր՝ թացնեյինք, հա, —
ասաց Սիմիկը, — բակի մի գրվանքա ուտելու
բան թոցնենք: Թե չե՝ զիլ սոված եմ:

— Բա յես, — համաձայնեց Վասկան:

Կայարանի յետեկ կանայք ինչ ասեք՝ ծա-
խում եյին. — Ել բուլկի, ել կալբաս, ել խաշած
տոտիկներ, ել ձու:

Տղաները փորձված հայացքով դիտեցին
խոնգած ամբոխը, ընարեցին բարձրահասակ,
մեծամորուք, լավ գաբաղած ու կաշվե կիսա-
մուշտակով ճամպորդին: Վասկան թռավ ճանա-
պարհորդի մոտ:

— Բիձա, մի կապեկ տան, սոված եմ:

Սկամորուք ճանապարհորդը ուրախ-ուրախ
նայեց իր վոտքերի մոտ հոլի պես պտույտ յեկող
փոքրիկ Վասկային:

— Շատ սոված ես, հա՞:
— Ըսենց սոված եմ զոր, բիձա ջան, —
Երեկվանից բան չենք կերել, — Ժպտաց Վաս.
կան, քաջալերվելով սևամորուք մարդու ուրախ
նայվածըից:

Ու հանկարծ, ցույց տալով Պետիկին, վըս-
տահորեն ասաց.

— Ցես ու Սիսիկն ելի մի կերպ կդիմա-
նալինք, հըեն մեզ հետ զարիք տղա կա, են չի
դիմանա: Նա գնում ե ընկեր Լենինին մտիկ
անելու:

— Լենինին մտիկ անելու, — զարմացած հար-
ցըրեց ճամպորդը:

— Այս: Նա մանկատնից ե փախել, պատ-
ճառը, զոր մենակ բաց չեն թողնում:

Բարձրահասակ ճամպորդը միանգամից լըր-
ջացավ: Ուշադրությամբ նալից Պետիկին:

— Զուր ե, — տխուր մտածեց Պետիկը, —
Վասկալի գովելը չարժեր: Հիմի կրոնի, յետ
կդրկի:

Ճամպորդի սևեռուն հայացքից վոզնու պես
կուչ յեկավ:

Իսկ նա ձեռքը գրպանը տարավ, հանեց նոր
շիշկան թղթադրամը ու մեկնեց Վասկային:

— Առեք, ես ել ձեզ:

Վասկալի գեմքը պայծառացավ, դրամը խլեց:
— Շնորհակալ եմ, ընկեր:

Վաղ տվին կայարանի յետել, կանանց մոտ:
Սպիտակ հաց ու կալբաս գնեցին: Միմիկը գըր-
պանից դանակը հանեց, հացն ու կալբասը յե-
րեք հավասար մասի բաժանեց ու ընկերներից
ամեն մեկին իր բաժինը տվեց: Կալբասը Պե-
տիկի գուրը յեկավ. առաջին անգամն եր կալ-
բաս ուտում: Մի վայրկյանում ամբողջը կերավ,
շթունքները լիզեց, պինդ շնչեց:

— Մի ջուր լիներ՝ խմելինք:
Տղաներն իրենց բաժինը ծամում եյին:
— Գնանք:

Կայարանում յերկաթե փոքրիկ տակառ եր
դրված: Այդտեղ ել յերկաթե շղթալով կախված
եր գավաթը, Խմեցին, փորները տողեց:

Կալբասը դուրակի գղթացնում եր: Պատ-
փորմի վրայով անցան ամբողջ գնացքի յերկա-
րությամբ, հանգիստ հետաքրքրությամբ նալե-
ցին մարդկանց, վորոնք վութկոտությամբ յետ
ու առաջ ելին անում: Ապա անցան գնացքի
մյուս կողմը ու մեկ-մեկ, առանց շտապելու
արկղը մտան: Հենց նոր ելին պառկել, գնացքն
ուղեկցողը ցախի յեկավ: Մի խտիտ ցախ վեր-
ցըրեց ու գնաց:

— ԹՌԱ, սատանա, վո՞նց վախցրեց, — ասաց
Սիմիկը:

Գնացքն ուղեկցողը նորից յեկավ ու սկսեց
ցախը վերցնել այստեղից, ուր տղաներն ելին
պառկած: Վասկան զգուշությամբ վոտքերը քա-
շեց: Ուղեկցողը շոշափեց Վասկայի թաղիքե վոտ-
նամաններն ու բարեսրտությամբ ասաց.

— ՀԵՅ, ճամպճրդ, վոտքերդ քաշիր, կմըր-
սացնես:

Պետիկի լեղին ջուր կտրեց: Ե՞ս, ալժմ ամեն
ինչ կորած ե: Հիմա միլիցիոները կտա, նրանց
արկղից դուրս կքաշի ու լավ ե՝ լեթե միայն
վոնդի: Թե չե՝ կարող են և յետ ուղարկել Ո՞ւմ
տղեն ես, ինչու համար:

— Հիմի կխրկի, — փսփսաց Պետիկը վախե-
ցած:

— Տո դե չե՞ս, նրա դարդը կտրել ե, —
նույնպես կամացուկ պատասխանեց Սիմիկը.

Բայց Սիմիկի ձայնից Պետիկը նկատեց, վոր
նա յել համոզված չի:

Տղաները սակվեցին: Մոտներով անդադար
մարդիկ ելին անցնում: Յերբեմն թվում եր, թե
հենց արկղի մոտ կանգ առան: Այն ժամանակ
Պետիկի սիրտն ախտես եր սկսում բարախեր
վոր կարծես թե մի ամբողջ վերստ նրա յետե-
քից ելին ընկել: Յեվ այդպիս ել թվում եր, թե

ուր վոր ե՝ արկղի դռնակը կբացվի, կոպիտ ձեռքը
վոտքերից կբռնի, դուրս կքաշի...

Վախից վոզնու պես կուչ յեկավ, փոքրիկ
կծիկ դարձավ ու կարծես թե՝ Պետիկը չլիներ:

— Այս, երնեկ տանն ըլեյի:

— Զանգն ինչու չեն տալիս, — տխուր մըր-
մընջաց Վասկան:

Այս, ուշանում եր: Հենց այդպես ել պետք
եր: Ու Պետիկը դուրս թռչելով արկղից, զանգը
քաշեց:

Դանդաղ զողանջեցին յերկու խուլ հարված:

— Ե՞ս, հիմի ել չի գա:

— Պրծափ, չի գա, դարդը կտրել ե:

— Յերեւում ե՝ բարի մարդ ե. տեսավ, վոր
փոքր ենք, մեղքն եկավ, — կամացուկ ասաց
Պետիկը:

— Պիտի վոր բարի ըլի. թե չե ուրիշ վախտ
են. չես շներն են պատահում, վոր պող-ստան-
ցիքից մեկում շան թուլի պես դուրս են շպըր-
տում: Լաս, աղաչես, մեկ ե, բան դուրս չի գա:
Պուճուր վակզաներում մնալուց ել վատ բան
չկա, մարդ սոված կրատկի. վոչ մի կտոր հաց
կարաս ճարի, վոչ մի կոպեկ փող, վոչ բան:

— Անհասկանալի մարդիկ են, բուրժույներ
են, — վստահորեն ասաց Վասկան, — նրանք սոված
մարդու հետ գործ չունեն:

— Զը՞նդ... զը՞նդ... զը՞նդ...

 Լսվեց կոնդուկտորի սուլիչի զիլ ձայնը, թավ
 ընդհատ պատասխանեց շոգեքարշն շշակը:

 Սիմիկը չդիմ ցացավ:

 — Ուռա, տղերք, գնացինք:

 Նույն վայրկյանին բացվեց արկղի դռնակը,
 և մեկը գնալու ժամանակ խցկվեց աղաների մոտ:

 — Ե՞ղ ով ե, — վախեցած ճշացին տղաները:

 — Ձերոնցից եմ, հանդարտ, — կտրված ճայ-
 նով պատասխանեց մի ոտար տղա՝ տեղավորվե-
 լով ցախերի վրա:

 — Շնուռ արա, սատանա, մտնում ես՝ դու-
 ռը դիր: Ընչի, չեյի՛ր կարում՝ շուտ մտնել:

 Նոր ճամպորդը դռնակը շրիկացրեց, սողաց
 դեպի տղաները:

 — Դե յես շուտուց եյի մտքիս դրել. ամա
 չորս կողմը լիքը մարդ եր:

 — Եղ ուր ես գնում:

 — Մոսկով:

 — Մենք ել Մոսկով: Դե լավ ե, մոտ արի,
 թե չե՝ կսառես:

 Տղան անցկացավ ցախերի վրայով:

 — Առանց են ել մրսել եմ: Դուք եղ ասեք՝
 ուտելու բան-ման ունեք:

 — Զե, ախալեր ջան, թամուզ կերել ենք:

Հաց ել ունեյինք, կալբաս ել ունեյինք: Միքիչ
 շնուռ գալիք, ելի:

 Մանկատնից բերած հացի կտորներից մեկը
 դեռ Պետիկի ծոցումն եր: Պետիկը կուշտ եր. կա-
 լբասի համը դեռ բերանումն եր:

 Հացի կտորը հանեց, նոր ընկերոջ մեկնեց:

 — Ա՛ռ, վիրտեղ ես:

 Տղան սառած մատներով շոշափեց Պետիկի
 ձեռքը, հացն առավ ու զգացված ասաց:

 — Ո՛հ, շնորհակալ եմ, ախալեր ջան:

 Ու լուռ չփշացնում եր, հացի կտորը բե-
 րանը խոթելով ու զույգ թշերն ուոցնելով:

 Գնացքը սլանում եր թուչունի պես: Փչում
 եր տակից, փշում եր դռնակի արանքներից:
 Քամին անցնում եր ցնցոտիների տակ: Յերեխա-
 ները յերեք-տակ դարձած՝ իրար սեղմվեցին:

 — Ցուրտ ե, հա, — ասաց խավարի միջից՝
 կողքից պառկող նոր տղան: Սիմիկը խղճահարվեց:

 — Մտի ըստեղ, յես չեմ մըսում:

 Տղան կողովեց կուչ յեկավ Սիմիկի ու Պե-
 տիկի արանքը ու շուտով քնեց:

 — Հլա պստիկ ա, աղե յա պետք, — փաղա-
 քշական ձայնով ասաց Սիմիկը:

10

Լուսաբաց եր, յերբ Մոսկվա հասան:

 Տղաները Պետիկին տարան կայարանի հե-

ուավոր անկյուններից մեկը։ Այստեղ իրար վրա
թափված, մի խիտ գունդ դարձած՝ յերեխաներ
եյին քնած։ Վոմանք կողոված եյին ցնցոտինե-
րի մեջ, վոմանք ել՝ մեշոկների։ Գնդի միջից
պատառուած վոտնամաններով վոտքերը դուրս
ելին ցցված։ Նրանք կոշիկները բորիկ վոտքե-
րին եյին հագած, կարճ վարտիկները վերև եյին
քաշած, մերկ մարմինները յերեռւմ եյին։

— Դէ, Պետիկ ջան, քեզ բան պետք դա-
լուց դուզ ըստեղ կգաս, տղերքին կհարցնես.
խոսքի ասած՝ ուր ե մատրոս Սիմիկը, — ամեն
մարդ ել տեղը կասի։

Պետիկին կայարանից դուրս տարան։

— Հրեն, դուզ դեպի կամուրջը, ենտեղ
բոլորը կասեն, թե վնրտեղ ե Միությունների
Տունը։ Յա թե չե՛ հրեն, տես, չորրորդ թե վե-
ցերորդ տրամվայը դուզ ենտեղ կզնա. յետնիցը
վազի։

Տղաները մտերմորեն հրաժեշտ տվին Պետի-
կին։

— Մենք ելի կպատահենք։ Մենք ել պիտի
գանք Միությունների Տունը։

Պետիկն անցավ հրապարակով, անցկացավ
կամուրջի մոտից ու կանգ առավ, — նրա առջև
միքանի փողոց եյին բացվում։

— Վո՞ր ճամպով գնամ։

Հիշեց, վոր տղաները տրամվայի մասին
եյին ասել ու սկսեց սպասել։ Յերեաց և 6
վագոնը։ Պետիկն սպասեց, մինչև վագոնը մո-
տից անցավ, նկատեց, թե վնդ կողմը նա դար-
ձավ, ու գնաց նույն փողոցով։ Հետո յեկավ ու
անցավ և 4-ը, ապա և 6-ը, և Պետիկը ճամառ
կերպով գնում եր նույն ճանապարհով։ Սկսեցին
դրոշակներով ու պսակներով՝ խումբ խումբ մար-
դիկ պատահել և, Պետիկը քանի առաջ եր գնում,
խմբերն այնքան հաճախ ելին պատահում։ Բո-
լորը մի ուղղությամբ ելին գնում։ Պետիկը գլխի
ընկավ, վոր այդ մարդիկ ընկ. Լենինի մոտ են
գնում, ու գնաց այդ խմբերի մեկի յետեից։

Մեծ հրապարակում կանգ առան։ Պետիկն
ուղում եր առաջ գնալ, ձիավոր միլիցիոներները
ճանապարհը կտրել եյին։ Հրապարակի խորքում,
քանի Պետիկի աշը կտրում եր, մեծ տան առ-
ջև ձգված եր մարդկանց անծայր ժապավենը՝
դրոշակներով ու պսակներով։ Պետիկը նկարնե-
րից իսկունք ճանաչեց Միությունների Տունը։
Տան ճակատին յերկար քաթաններ ելին կախված,
կարմիր ու սև, քաթանների վրա մակագրու-
թյուններ ելին յերեռւմ։

Յետեկց անընդհատ հեղեղի պես մարդիկ
եյին գալիս։ Ու շարունակ դրոշակներ, պսակներ,
դրոշակներ, պսակներ։ Պետիկը լավ մտիկ տվեց։

Հանկարծ մի փոքրիկ տղա վրա պրծավ նրան,
ձեռքերով բռնեց:

— Արի գյուլաշ կպնեսը, ցնփոր:

Ու սկսեց դիտմամբ Պետիկին գետին գլու-
րել: Պետիկը տղայի ուրախ ու ցրտից կարմրած
դեմքին նայեց ու ինքն ել ուրախացավ. քիթը
քաշեց ու թաթմանով սրբեց:

— Ախր դու մեծ ես:

— Բա դու պստիկ ես:

— Հալբաթ վոր պստիկ եմ:

Այդ տղային մի ուրիշ տղա վրա պրծավ,
նրան վայր զցեց ու ծիծաղելով վախավ: Առա-
ջին տղան վեր կացավ ու վիրավորողի յետերց
ընկավ: Ուրիշները մոտ վազեցին, յերկու տղա-
յին ել վայր գլորեցին:

Հսկայական ձագարի պես պտույտ պտույտ
եր անում մարդկային հեղեղը: Վառվում եյին խա-
րույկները: Պետիկը ճխտվեց խարույկներից մեկի
մոտ, տեսավ այն տղային, վոր ուղել եր նրա հետ
կոխ բռնել, ու մոտեցավ նրան:

— Հը՛, սառել ես:

— Սառել եմ:

— Վեր վեր թոի՝ կտաքանաս:

— Բիձա, ընկեր լենինի նաշն ենտեղ ե
դրած, հարցըց Պետիկը, ցույց տալով Միու-
թյունների ծունը:

— Այնտեղ ե: Ինչ, ուղում ես տեսնել:

— Կթողնեն վոր:

— Կթողնեն, բոլորին ել թողնում են: Ե',
դու մինչև հասնես այնտեղ, կսառես:

— Հըն, են մանղրների հետ գնա:

Մոտովը յերեխաները եյին տանում: Նրանք
յեղենու ճյուղերից պսակ եյին տանում՝ կարմիր
ու սև ժապավեններով պատած:

— Սրանք հետները չեն թողնի, — տխուր ու
տրտում ասաց Պետիկը:

— Կտանեն: Խնդրիր՝ թող տանեն:

— Սիրտ չեմ անում:

— Ինչ վախլուկն ես, տո՛: Արի՝ տանեմ:

Յերիտասարդը Պետիկի ձեռքը բռնեց, յերե-
խաների խմբին մոտեցավ ու դիմեց նրանց ա-
ռաջնորդող կնոջը, ըստ յերեսութին, դաստիարակ-
չուհուն:

— Ըսկեր, այս տղին ել տարեք, թե չե՞
կսառի:

իինը նայեց Պետիկին:

— Զգիտեմ՝ ինչ անեմ, ուրիշին կարելի՞ յե,
թե չե:

— Ինչի՞ չի կարելի, ինարկե կարելի յե:
Յերեխաներից մեկն ասաց.

— Վերցըք, Աննա Պետրովնա, թող յետեր
կանգնի:

— Դե գնա, այնտեղ շարք կանգնիր:

Պետիկն ուրախությունից իրեն կորցնելով՝
վաղ տվեց վերջին շարքերը: Վերջին տղան տեղ
տվեց:

— Կանգնիր կողքիս, թե չե յես թաք եմ:

Թեին կարմիր բանտ կապած մարդը մոտեցավ և ասաց Աննա Պետրովնային.

— Ընկեր, յերեխեքին առեք, անցեք:

Առջնից, լայն բաց արած դռներով, շարքով,
յերեք-յերեք ներս եյին մտնում մեծերը: Քիչ
այն կողմը, մյուս դռնով նույնպես յերեք-յերեք՝
շարքով ներս եյին մտնում: Հրապարակի աղ-
մուկը հեռվացավ: Այստեղ լուս ու գլխաբաց ելին
գնում: Տիրությունը համակեց բոլորին: Լայն
սանդուղքի աստիճանների վրա բազմաթիվ վոտ-
քերի հանդարտ թփթփոց եր լսվում: Կողքերին
պահակներ եյին մեխմած:

Հեռվից տխուր ու մելամաղձուա յերաժշտու-
թյուն լսվեց: Պետիկի մարմնով մի դող անցկա-
ցավ: Ուրեմն ընկեր լենինը մոտ եր: Մարդկա-
յին ալիքը դարձավ դեպի ձախ: Շլացնող լույսն
ընկապ Պետիկի յերեսին: Բարձր հսկայական դահ-
լիճում հազարավոր լույսեր եյին վառվում: Ամ-
բոխը դանդաղ, խորին լուսթյամբ առաջ եր շարժ-
վում...

Պետիկը յերաժշտությունն այնպես եր լսում,

կարծես քնի մեջ լինի: Չեր տեսել՝ վոչ լույսեր,
վոչ ծաղիկներ, վոչ ել պսակներ: Աչքերը սկեռեց
լենինին, դալուկ ձեռքերին, վոր հանգիստ դրված
եյին կըծքին:

Ուզում եր նայել յերեսին, բայց արտաս-
վակալած աչքերը չկարողացան վոչինչ տեսնել,
բացի մեծ ու փայլուն նշանից:

— Մի կանգնի, գնա, — կամացուկ ասաց մեկը
յետեկից:

Պետիկն առաջ անցավ: Սկսեց աստիճաննե-
րով իջնել ու հանկարծ այնպես զգաց, վոր կար-
ծեք մեկն իր սիրտն ամուր սեղմում ե: Իջավ
աստիճանի վրա, կպավ բազրիքին (ճաղեր) ու
յերեսը ձեռքերի մեջ առնելով՝ լաց յեղավ:

Աննա Պետրովնան իսկույն մոտեցավ նրան:

— Եդ ի՞նչ ե: Ի՞նչ պատահեց, տղա:

Աննա Պետրովնաի ձայնը փորն եր ընկել,
ձնշվել, շրթունքները կուչ ելին գալիս: Մոտե-
ցավ խիստ դեմքով մի մարդ, Պետիկի թուշը
շոյեց, մտերմորեն ու կամացուկ ասաց.

— Բան չկա, փոքրիկ ջան, վոչինչ, մի կերպ...

Աննա Պետրովնան տղայի թեր բոնեց ու
տարավ փողոց:

— Վձրտեղացի յես: Ո՞ւմ տղան ես:

Պետիկը թաթմաններով սրբեց արտասուքը

ու լոեց: Նըա հետ զույգ գնացող աղան առաջարկեց.

— Գնանք մեզ հետ, մեզ մոտ լավ ե:
Աննա Պետրովնան կռացավ Պետիկի վրա.

— Հա, հա, մեզ հետ արի:
Պետիկը գլուխը շարժեց.

— Զեմ ուզում:
— Ինչո՞ւ:
— Հենց ընենց:

Պետիկը թողեց աղաներին ու թեքվեց ուրիշ
կողմ: Նա ուզում եր Ելի գնար Միությունների
Տուն: Միլիցիոներների շղթան փակում եր ճա-
նապարհը:

— Այստեղ չի կարելի, են կողմը գնա:

Պետիկը յետ դարձավ: Այժմ նա գիտեր,
վոր հարկավոր ե կաչել յերեխաների վորեւե խմբի
պոչից, և նա նորից իլլիչի մոտ կընկնի: Պետիկը
չեր կարողացել իլլիչի նլավ մտիկ անել: Աչքի ա-
ռաջ կրծքին հանգիստ գրած ձեռքերն ելին միայն:

Անցավ միքանի նրբանցքներով և ամբոխի
յետելից նորից դուրս յեկավ Միությունների Տան
մոտ: Համարձակ մոտեցավ հերթի կանգնած յե-
րեխաների խմբին ու կանգնեց վերջին շարքում:
Կամ (պաճո քթով) ջնգուտ աղան խոլորած աչ-
քով նայեց Պետիկին ու բարկացած ասաց.

— Դու ընչի մտար եստեղ, դու մեզնից չես:

Պետիկը լուռ նայեց ջնգուտ աղային ու վո-
չինչ չպատասխանեց:

Տղան գմսուկեց Պետիկի կողին:
— Գնա եստեղից:
Պետիկի բռունցքները յեռ եկան:
— Ես մոռւթը բանցը կճատին հասցնելը տեղն
է, ամայերկյուղալի յե, — դու արի ու տես՝ խրկեն:

Տղան չեր հանգստանում:
— Մարիա Վասիլևնա, եստեղ ուրիշ աղա յե
յեկել, — կանչեց դաստիարակչուհուն:

Դաստիարակչուհին մոտեցավ:
— Ինչո՞ւ յես մտել այստեղ, տղա:
Պետիկը հոնքերի տակից նայեց Վասիլևնային:
— Ուզում եմ ընկեր լենինին մտիկ անեմ:
— Իե լավ, արի, ամա տես՝ չարություն
չանես: Թողի գա, — գարձավ նա կճատ աղային:
Յերեխաներին, ելի առաջգա պես, մոտեցավ
թերին կարմիր ժապավեն կապած մարդը և ասաց
Աննա Վասիլևնային.

— Յերեխաներին առեք, առաջ անցեք:
Ելի զլսաբաց բարձրանում եյին լայն սան-
դուղքով: Ելի ինչ-վոր մի հեռու տեղից համառում
եր տխուր ու մելամաղոտ յերաժշտության ձայնը:
Ահա և իլլիչը: Ահա կրծքին ծալած դալուկ ձեռ-
քերը: Ահա փոքր, նկարներից ծանոթ մորուքը:
Ահա մեծ, նազար պապի ճակատի պես՝ ճակա-

տը: Պետիկն աչքերը չորս արած նայում եր: Ու
հանկարծ Պետիկն թվաց, թե մեղմ ժպիտով
շարժվեցին իլլիչի կլոր շրթունքները, խորամանկ
կերպով թարթեց ճտած ձախ աչքը և այնպես,
ինչպես այնտեղ՝ մանկատանը.

— Մի տխրի, Պետիկ, չես կորչի:

Պետիկը փողոց դուրս լեկավ, ինչպես մշու-
շի մեջ:

Մթնում եր: Լապտերները պայծառ փալե-
ցին: Պարզկան կտրում եր: Մարդկանց սև ժա-
պավենն անդադար ձգվում եր փողոցներով ու
նրբանցքներով: Պետիկը խորը հառաչեց:

— Ե՛, բա վհնց անենք, յերեսում ե՛ տուն
պիտի դառնալ:

Քաղց եր զգում, լերեկվանից բերանը հաց
չեր դրել:

Ծոցը ման յեկավ, վոչինչ չգտավ: Ուզում
եր առուտուր անող կնոջից խնդրել, — մեջը կալ-
բասի կտորներ դրած բուլկիները խեթը տանում
եյին, — ձեռքը թափ տվեց:

— Տո դե թող կորի, ե՛, մի կերպ կհասնեմ:

Հենց այստեղ ել զայրացած մտածում եր
քաղաքացիների մասին:

— Հլա տես, ինչ բուլկիներ են լափում, եե...

Բոլորովին մթնել եր, յերբ կայարան հասավ:
Գնաց ուղղակի ծանոթ անկյունը: Սիմիկն ու

Վասկան այնտեղ եյին: Ուրախ-ուրախ մոտեցան
Պետիկին:

— Հը, վճնց յեղավ, իլլիչին տեսամբ:

— Տեսա:

— Մենք ել եյինք ենտեղ, կազմակերպու-
թյունների հետ յերեք անգամ գնացինք: Ի՞նչ ես
առում՝ հիմա դառնանք տուն:

— Դառնանք:

— Լավ կանեյիր՝ մեզ հետ մնայիր, — ասաց
Վասկան, — ենտեղ մանկատանն ի՞նչ կա, լավ չի:

— Զե, ախպեր, մեր տեղը լավ տեղ ե:
Նադեժդա իվանովան գրքեր ե կարդում, ամեն
անգամ չայ ենք խմում:

— Գնա, գնա, Պետիկ, թե չե՛ մեր որը
շան որ ե, ամեն մարդ չի դիմանա, — Աջորեն
ասաց Սիմիկը: — Ուտելու հետ վհնց ես:

— Լա...ավ, ընենց:

Սիմիկը ծոցից մի կտոր հաց հանեց:

— Առ, խժով: Շուտով պղյեղըն ել կգա:

— Յես մենակ վհնց պիտի գնամ, — հար-
ցըրեց Պետիկը:

— Մենք քեզ կնստեցնենք վագոնը, նրա-
նից դենը մի կերպ մենակ ել կհասնես: Մոսկո-
վից գնալը հեշտ ե, եղ եստեղ գալն ե մեզ
նմանների աչքը վախեցնում:

Սիմիկը ճակատը կնճռեց:

— Բառւտելու բանը վոնց անէնք, մենք
բան չունենք, դու յել չես կարող ճարել:

— Յես հիմի կրիմանամ:

— ԶԵ, չես դիմանա, դու չես իմանում,
թե մարդ ճամպին վոնց ե սովածանում: Կաց,
մենք մի բան կճարենք:

Սիմիկը տղաներից մեկին, հետո մի ուրիշին
մի կողմ քաշեց ու նրանց հետ մի բան փափսաց:

— Մի վախենա, կտամ, — ասաց Սիմիկը:

Պետիկը տեսավ, թե ինչպես տղաները
խառնում եյին իրենց ցնցոտիները և ինչ-վոր
բան խոթում Սիմիկի բուռը: Սիմիկը վասկա-
յին միքանի կոլուած թղթեր տվեց և ուրախ-
ուրախ աչքով արագ:

— Վասկա ջան, թաք մի ուտելու բան
բեր:

Վասկան ակնթարթում կորավ:

— Գնանք, Պետիկ, կամաց կամաց տեղա-
վորվել ե պետք:

Կայարանից դուրս յեկան, ինչ-վոր ոլոր-
մոլոր տեղերով, բակերի միջով գնացին ու կանգ
առան ներկած բարձր պարսպի մոտ:

— Բարձրացիր, ուսս տակդ կտամ:

Սիմիկը Պետիկին բարձրացրեց, թեթևակի
թռավ և ինքը: Գնացին գծերի միջով, անդադար
նայում եյին վագոնների տակ:

— Ես Ել մեր պունդով, — ասաց Սիմիկը:
Վագոնները դեռ բաց չեյին, միայն տեղ-
աեղ վագոնների մոտ ուղեկցողներն եյին կան-
գնած:

— Դու եստեղ կանգնի, յես գնամ քեզ
տեղ գտնեմ:

Սիմիկը շուտով վերադարձավ: Ժպտում ե:
— Գնանք, պլացկարտով տեղ եմ գտել:

Անցան գնացքի մյուս կողմը, ուր ուղե-
կցողներ չկային: Գծերի միջով հերին ոլանում եր
վասկան. վաղ տվեց տղաների մոտ, թղթի մեջ
փաթաթած խաշած տոտիկն ու հացը տվեց Պե-
տիկին:

— Առ, հիմա տեղ կհասնես:

Պետիկը յերկուսի ձեռքն ել զգացված սեղ-
մեց:

— Շնորհակալ եմ, ընկերներ:

— Դե ինչ եք անում, մտիր, — մոալվեց
Սիմիկը:

Պետիկը թռավ արկղի մեջ: Դոնակը շրխկա-
ցնելով, ասաց.

— Լավ կանեք՝ դուք ել ինձ հետ գաք, ախ-
պըրտանք, Նադեժդա Իվանովնան չի խրկի:

Սիմիկը ձեռքով թափահարեց միայն:

— Զի ուզի... ենտեղ ինչ կա:

ՀՀ Ազգային գրադարան



NL0391109

1982р.

3188



9.1.6. 204.

2

891.710
7-81